ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 27

ՕՐԱԿԱՐԳ

1. **Տեղեկատվություն Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային և Երևան քաղաքի հանձնաժողովների հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված՝ 2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին:**

   /զեկուցողներ՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ մարզային և Երևանի քաղաքային հանձնաժողովների ներկայացուցիչներ/

2. **Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրի մշտադիտարկումը և գնահատումը իրականացնող միջգերատեսչական խմբի ստեղծում:**

   /զեկուցող՝ Ա. Կեսոյան- ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ /

3. **Տեղեկատվություն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հաշվետվության վերաբերյալ:**

   /զեկուցող՝ Ա. Հակոբյան- ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ /

4. **Այլ հարցեր:**

Մասնակցեցին՝

Ա. Ասատրյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի նախագահ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ջ. Բաղդասարյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Մ. Մկրտչյան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ

Խ. Ասրյան՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

Ա.Պողոսյան՝ ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ

Հ. Աբրահամյան՝ Հայաստանի հաշմանդամների <<Փյունիկ>> միության նախագահ

Ա. Ալավերդյան՝ <<Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության <<ՈՒՆիսոն>> հասարակական կազմակերպության նախագահ

Ս.Թադևոսյան՝ <<Հույսի կամուրջ>> հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն>> հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Մկրտչյան՝ <<Սկարպ>> առողջական կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ

Լ. Ներսիսյան՝ <<Աստղիկ>> հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա>> հասարակական կազմակերպության նախագահ

Ս.Մաղաքյան՝ <<Լիարժեք կյանք>> հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Հովհաննիսյան՝ <<Լռության ձայն>> հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Կեսոյան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ **(հանձնաժողովի քարտուղար)**

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ***ազգային հանձնաժողովի անդամների առաջարկությամբ*** նիստին մասնակցել են՝

Ռ. Այվազյանը՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչության փոխադրումների քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ *(նախարարի տեղակալ Ա.Արսենյանի առաջարկով)*

Ա. Նազարեթյան՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի

աշխատակազմի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետ
(կոմիտեի պետի տեղակալ Ա.Ղուլարյանի առաջարկով)

Ա. Իվանյանը՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային զարգացման պլանավորման բաժնի պետ
(նախարարի առաջին տեղակալ Վ.Տերտերյանի առաջարկով)

Ա. Եղիազարյանը՝ <<Փրկություն>> ՀԿ-ի ներկայացուցիչ
(ՀԿ-ի նախագահ Ա.Աբրահամյանի առաջարկով)

Մ.Սարգսյան՝ <<Հայաստանի կույրերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահի տեղակալ
(ՀԿ-ի նախագահ Ա.Հակոբյանի առաջարկով)

Մ. Խաչատրյանը՝ <<Հայաստանի խուլերի միավորում>> հասարակական կազմակերպության նախագահության քարտուղար
(ՀԿ-ի նախագահ Գ.Գրիգորյանի առաջարկով)

ՀՐԱՎԻՐՎԱԾՆԵՐ՝

Լ. Մուրադյան՝ ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արմավիրի մարզային հանձնաժողովի նախագահ

Վ. Դավթյան՝ ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Սյունիքի մարզային հանձնաժողովի նախագահ

Ա. Նիկոյան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի նախագահ

Հ. Արշակյան՝ ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի նախագահ

Հ. Բաբայան՝ ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Արարատի մարզային հանձնաժողովի նախագահ

Վ. Ջաղինյան՝ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քարտուղար

Վ. Հունանյան՝	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Կոտայքի մարզային հանձնաժողովի քարտուղար
Գ. Դանիելյան՝	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արագածոտնի մարզային հանձնաժողովի քարտուղար
Ն. Ճաղարյան՝	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Տավուշի մարզային հանձնաժողովի քարտուղար
Ֆ. Բաբայան՝	Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց Ձորի մարզային հանձնաժողովի քարտուղար
Մ. Բաղդասարյան՝	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ
Հ. Հունանյան՝	<<Սատար>> հաշմանդամների ՀԿ-ի նախագահ
Ս. Մալխասյան՝	Ժեստերի լեզվի թարգմանիչ
Ա. Մանգասարյան՝	Զբաղվածության պետական ծառայության գործակալության պետ
Հ. Հարությունյան՝	ՀՀ ԲՍՓ գործակալության պետի տեղակալ
Հ. Ղուկասյան՝	ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ պետի խորհրդական
Ա. Դանիելյան՝	ՀՀ ԱՍՀ նախարարի մամլո քարտուղար
Ս. Զաքարյան՝	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Ա. Պողոսյան՝	UNICEF-ի ներկայացուցիչ
Մ. Մալխասյան՝	UNDP- ի ներկայացուցիչ
Ա. Հակոբյան՝	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ
Ա. Հայրապետյան՝	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի գլխավոր մասնագետ
Հ. Մկրտչյան՝	ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի առաջատար մասնագետ

Ս.թ. մայիսի 5-ին տեղի ունեցավ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի /այսուհետ՝ Հանձնաժողով/ հերթական նիստը, որը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար պարոն Ա. Ասատրյանը:

Ողջունելով Հանձնաժողովի անդամներին և հրավիրված անձանց՝ Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը կարևորեց 2016 թվականի ընթացքում մարզերում և Երևան քաղաքում իրականացված աշխատանքները, ինչպես նաև շնորհակալություն հայտնեց գործընկերներին իրականացված լայնածավալ աշխատանքների համար:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանի առաջարկությամբ հաստատվեց Հանձնաժողովի նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ հաշվետվությունները ներկայացնելիս կարելի է հիմնականում անդրադառնալ ձեռքբերումներին և այն խնդիրներին, որոնք առավել մտահոգիչ են և կարիք կա, որ այդ խնդիրները քննարկվեն Հանձնաժողովի նիստում, նախանշվեն դրանց լուծման ուղիները: Բացի այդ, Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ, համաձայն նախորդ նիստերից մեկի ընթացքում տրված հանձնարարականի, մշակվել են հաշվետվությունների ձևաչափեր, ինչը հնարավորություն է տալիս միանման տեղեկատվություն ստանալ իրականացված աշխատանքների վերաբերյալ և եթե կլինեն նաև մշակված ձևաչափերի վերաբերյալ առաջարկներ, ապա դրանք նույնպես կարելի է քննարկել: Պարոն Ա. Ասատրյանը նշեց նաև, որ մշակված ձևաչափերում առկա ամբողջական տեղեկատվությունը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին և առաջարկվում է սահմանել ժամակարգ՝ յուրաքանչյուր զեկուցողի համար մինչև 3 րոպե, ինչը հնարավորություն կտա ավելի շատ ժամանակ տրամադրել հարցերին և պատասխաներին:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ ելույթ ունեցան Երևանի քաղաքապետարանի և մարզպետարանների ներկայացուցիչներ՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության վարչության պետի տեղակալ Մհեր Բաղդասարյանը, ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արմավիրի մարզային հանձնաժողովի նախագահ Լարիսա Մուրադյանը, ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Սյունիքի մարզային հանձնաժողովի նախագահ Վարդան Դավթյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Գեղարքունիքի մարզային հանձնաժողովի նախագահ Արտաշես Նիկոյանը,ՀՀ Շիրակի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Շիրակի մարզային հանձնաժողովի նախագահ Հարություն Արշակյանը, ՀՀ Արարատի մարզպետի տեղակալ, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արարատի մարզային հանձնաժողովի նախագահ Հայրապետ Բաբայանը,Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Լոռու մարզային հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյանը, Հաշմանդամություն

ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Կոտայքի մարզային հանձնաժողովի քարտուղար Վանիկ Հունանյանը, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Արագածոտնի մարզային հանձնաժողովի քարտուղար Գայանե Դանիելյանը, Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Տավուշի մարզային հանձնաժողովի քարտուղար Նարինե Ճաղարյանը և Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ՀՀ Վայոց Ձորի մարզային հանձնաժողովի քարտուղար Ցողիկ Բաբայանը: Զեկուցողները ներկայացրեցին իրենց մարզերում իրականացված աշխատանքների (դրանց էլեկտրոնային տարբերակը տեղադրված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջի՝ mlsa.am հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի ոլորտի հաշվետվություններ բաժնում) համառոտ նկարագրությունը:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը կարևորեց Արմավիրի մարզպետարանի կողմից <<Արմավիրի զարգացման կենտրոն>> ՀԿ-ի ցերեկային կենտրոնին տրամադրված աջակցությունը և հույս հայտնեց, որ ցերեկային կենտրոնների ստեղծման աշխատանքները կլինեն շարունակական:

Զեկույցների մասին կարծիք հայտնեց Հանձնաժողովի անդամ <<Ունիսոն>> ՀԿ-ի նախագահ Ա. Ալավերդյանը, ով մեկ անգամ ևս հորդորեց բոլոր զեկուցողներին խուսափել օգտագործվող սխալ բառապաշարից՝ մասնավորապես <<սահմանափակ կարողություններով կամ սահմանափակ շարժումներով մարդիկ>> բառերից, ինչպես նաև հետաքրքրվեց, թե մարզերում կառուցվող թեքահարթակները ինչ ֆինանսական միջոցներով են կառուցված, համապատասխանում են արդյոք դրանք սահմանված շինարարական նորմերին, և արդյոք հաշվի առնվել են տեսողության խնդիրներ ունեցող անձանց կարիքները մայթեզրերի և փողոցների հարմարեցման աշխատանքներում:

Հարցին ի պատասխան Վ. Դավթյանը նշեց, որ թեքահարթակները կառուցվել են մասնավոր կազմակերպությունների ֆինանսավորմամբ, և եթե նախկին տարիներին եղել են սխալ կառուցված թեքահարթակներ, ապա 2016 թվականին մարզպետարանը հստակ ուշադրության կենտրոնում է պահում այդ հարցը:

Հանձնաժողովի նիստին հրավիրված մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները նշեցին, որ թեքահարթակներ կառուցվում են, սակայն բավարար չեն՝ սուղ ֆինասնական միջոցների պատճառով:

Զեկույցների մասին արտահայտվեց նաև ՀՀ աշխատանքի և սոցիակալան հարցերի նախարարի տեղակալ Ջ. Բաղդասարյանը, ով նշեց, որ մշակված ձևաչափերը պարունակում են կարևոր և լայնածավալ տեղեկատվություն, որը կարող է հետագայում կարևոր ուսումնասիրությունների հիմք հանդիսանալ: Միաժամանակ, նա տեղեկացրեց, որ Հանձնաժողովի կազմն ընդլայնվել է՝ ընդգրկելով նոր գերատեսչությունների ներկայացուցիչների, մասնավորապես՝ սպորտի և երիտասարդության հարցերի, մշակույթի, կապի, տրանսպորտի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունների, ինչպես նաև քաղաքաշինական պետական կոմիտեի և այլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Զեկույցների մասին արտահայտվեց նաև Հանձնաժողովի անդամ Խ. Ասրյանը, ով տեղեկացրեց, որ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը

2016 թվականին 65 մլն. դրամ է հատկացրել հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կառույցներին, իսկ 2017 թվականին ևս 47 մլն. դրամ կհատկացվի: Նա նշեց նաև, որ ՀՀ նախագահի մրցանակի <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթում արդեն 5 տարի ընդգրկված են հաշմանդամի սայլակ օգտագործող մարզիկների ընտանիքներ, ինչպես նաև կազմակերպվում է <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթը:

Հանձնաժողովի անդամ Ա. Ալավերդյանը նշեց, որ ողջունելի է նմանատիպ մրցույթների առկայությունը, սակայն 2 խնդիր է տեսնում: Նախ և առաջ պարոն Ալավերդյանն առանձնացրեց մրցույթների անցկացման վայրերի մատչելիության խնդիրը, ինչպես նաև նշեց, որ մարզերում բնակվող հաշմանդամություն ունեցող անձինք ակտիվորեն ներգրավված չեն այդ մրցույթներում:

Զեկուցողներին հարց ուղղեց նաև Հանձնաժողովի անդամ <<Փյունիկ>> հասարակական կազմակերպության նախագահ Հ. Աբրահամյանը, ով հետաքրքրվեց, թե ինչպես է կազմակերպվում հաշմանդամություն ունեցող մարզիկների մարզումները և կան արդյոք մատչելի մարզադպրոցներ մարզերում: Նա նշեց նաև, որ եթե կա օրենսդրական բաց, ապա կարելի է մշակել համապատասխան իրավական ակտ, որը կլուծի մարզերում մարզադպրոցներից գոնե մեկը հարմարեցնելու խնդիրը:

Հանձանժողովի նիստին հրավիրված ՀՀ Լոռու մարզպետարանի ներկայացուցիչ Վ. Ջաղինյանը, արձագանքելով պարոն Հ. Աբրահամյանի հարցին, նշեց, որ Լոռու մարզում կազմակերպվում են մարզիկների համար որոշ մարզումներ հանրապետական փառատոնների լավագույնս մասնակցելու համար:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը հետաքրքրվեց, արդյոք մշակվում են ծրագրեր մարզադպրոցների հարմարեցման հետ կապված, կամ արդյոք կան հստակ ուսումնասիրություններ, թե մեկ մարզադպրոցի համար որքան ֆինանսական միջոցներ են հարկավոր: Նա նշեց նաև, որ անհրաժեշտության դեպքում կարելի է ստեղծել աշխատանքային խումբ, որը կգնահատի խնդիրը և կներկայացնի հստակ առաջարկություններ մարզադպրոցների հարմարեցման վերաբերյալ:

Հանձանժողովի նիստին հրավիրված Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ պարոն Մ. Բաղդասարյանը նշեց, որ հարմարեցված մարզադպրոցի մոդելային օրինակ կարող է հանդիսանալ Շենգավիթ վարչական շրջանի մարզադպրոցը, որին սակայն առարկեց Հանձնաժողովի անդամ պարոն Հ. Աբրահամյանը՝ կարծիք հայտնելով, որ այդ մարզադպրոցը բացարձակապես չի համապատասխանում մատչելիության չափորոշիչներին:

Հանձնաժողովի անդամ Ս. Մաղաքյանը առաջարկեց համայնքային ֆինանսների միջոցով մարզերում լուծել այս խնդիրը, ինչպես նաև այդ ֆինանսավորումն օգտագործելու ընթացքում անպայման պետք է հաշվի առնվեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:

Հանձնաժողովի անդամ Խ. Ասրյանը առաջարկեց Հանձնաժողովի անունից տվյալ խնդրի վերաբերյալ գրությամբ դիմել ՀՀ վարչապետին և ստանալ նրա համապատասխան հանձնարարականը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ մինչ ՀՀ վարչապետին դիմելը անհրաժեշտ է հստակ չափորոշիչներ մշակել, նախանշել այն առաջարկները, որոնք կապահովեն խնդրի համակարգային լուծումները: Պարոն Ա. Ասատրյանը նաև առաջարկություն ներկայացրեց, որ եթե կան արդեն գնահատված կարիքներ և ֆինանսական հաշվարկներ կոնկրետ մարզադպրոցների մասով, ապա դրանք կարելի է ընդգրկել այլ ծրագրերի մեջ՝ օրինակ բերելով ՀՀ կրթության և գիտության նախարության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ իրականացվող հանրակրթական դպրոցների վերակառուցման և շենք-շինությունների սեյսմակայունության բարձրացման ծրագիրը:

Հանձնաժողովի նիստին հրավիրված Վ. Դավթյանը նշեց, որ այս հարցը վերաբերում է ոչ միայն մարզադպրոցներին, այլ նաև կրթական և մշակութային շենք շինություններին, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա. Հակոբյանը նշեց, որ ՀՀ կառավարության 2017 թ. հունվարի 12-ի նիստի <<Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2017-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> N 1 արձանագրային որոշմամբ /ասյուհետև՝ Համալիր ծրագիր/ նախատեսված է <<Հասարակական նշանակության շենքերի ու շինությունների մատչելիության գնահատում և ըստ այդմ, խելամիտ հարմարեցումների իրականացում>> միջոցառումը, որը օրենսդրական հիմք է հանդիսանալու նաև մազրադպրոցների նորմատիվ գնահատման աշխատանքների համար:

ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինական պետական կոմիտեի ներկայացուցիչ Ա. Նազարեթյանը նշեց, որ այս պահին մշակվում է Հայաստանի բոլոր շենքերի կադաստրային գրանցամատյան ձևաչափը, որը կքննարկվի շահագրգիռ մարմինների հետ և դրա մեջ տեղ կգտնեն սոցիալական տարբեր խավերի կարիքները: Մարզադահլիճների հարմարեցման վերաբերյալ խոսելիս պարոն Ա. Նազարեթյանը կարևորեց նաև միջազգային ընդունված նորմերի տեղայնացումը, որովհետև նորմատիվ փաստաթղթերի վերանայումից և հստակեցումից հետո արդեն տեսանելի կլինի հարմարեցման հետ կապված խնդիրների լուծման մեխանիզմները:

Հանձնժողովի անդամ Ա. Պողոսյանը նշեց, որ հարմարեցման խնդրին պետք է ավելի պրագմատիկ տեսանկյունից մոտենալ և մատչելիության խնդրի լուծման համար անհրաժեշտ է կատարել համապատասխան քայլեր: Պարոն Ա. Պողոսյանը նշեց, որ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ պետական սեփականություն հանդիսացող մշակութային օջախների համար պատվիրվել են նախագծեր, որոնց հիման վրա պետք է ապահովվի շենքերի մատչելիությունը: Նա նշեց նաև, որ ֆինանսական խնդիրներ կան, սակայն հստակ քայլերն արդեն արվում են և հետագայում որևէ ծրագրում ընդգրկելու դեպքում արդեն կան նախագծեր: Նա առաջարկեց ոլորտային նախարարություններին գույքագրել իրենց համակարգում գործող հաստատությունների

շենք-շինություններում առկա մատչելիության խնդիրները և պատրաստել համապատասխան նախագծեր:

Հանձնաժողովի անդամ <<Հույսի կամուրջ>> հասարակական կազմակերպության նախագահ Ս. Թադևոսյանը հետաքրքրվեց, թե ինչու քաղաքաշինության պետական կոմիտեն պաշտոնապես չի ընդունում <<համընդհանուր դիզայն>> հասկացությունը և առաջարկեց նորմատիվ ակտերը մշակելիս հիմք ընդունել հենց այդ գաղափարը:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը առաջարկեց հարցի վերաբերյալ հստակ մոտեցումների և առաջարկությունների առկայությունների դեպքում մարզադպրոցների հարմարեցման, ինչպես նաև <<համընդհանուր դիզայնի>> հետ կապված հարցերը դարձնել առաջիկա նիստերից մեկի քննարկման առարկա և հանձնարարեց հանձնաժողովի անդամներին նախարարություն ներկայացնել հստակ առաջարկություններ:

Հանձնաժողովի անդամ Հ. Աբրահամյանը նշեց, որ Հրազդան քաղաքում ձևավորվել է պարականոեի մարզաձևի թիմ, որը ունի լավ հեռանկար միջազգային ասպարեզում հանդես գալու և խնդրեց Կոտայքի մարզպետարանին հնարավորության սահմաններում աջակցելու նրանց: Հանձնաժողովի նիստին հրավիրված Վ. Հունանյանը նշեց, որ ս.թ. մայիսի 10-ին ՀՀ Կոտայքի մարզպետի մոտ կազմակերպվելու է հանդիպում այդ թիմի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում կքննարկվի նաև աջակցության տրամադրման հարցը:

Հանձնաժողովի անդամ Ս. Մաղաքյանը արձագանքեց նաև սայլակների գնման գործընթացում առկա խնդիրների վերաբերյալ, որին ի պատասխան պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ այդ գործընթացը գտնվում է առաջին ատյանի դատարանում և որևէ կազմակերպության հետ պայմանագիր կնքելու գործընթացը կասեցված է: Միաժամանակ պարոն Ա. Ասատյանը հանձնարարեց նախարարության համապատասխան ստորաբաժանումներին ներկայացնել այլընտրանքային տարբերակ՝ խնդիրների շուտափույթ կարգավորման վերաբերյալ:

Հանձնաժողովի անդամ Հ. Աբրահամյանը նշեց, որ գործընթացում կարելի է ընդգրկել Երևանում գտնվող հայտնի գործարարի, ով զբաղվում է սայլակների ներկրմամբ:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ հստակ առաջարկի դեպքում պատրաստակամ է հանդիպելու և քննարկելու հարցը, ինչպես նաև տեղեկացրեց, որ 2018 թվականից սայլակները տրամադրվելու են հավաստագրերով, որը պետք է լուծի գնումների գործող օրենսդրության հետևանքով առաջացող խնդիրները:

Հանձնաժողովի անդամները մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների զեկույցները ընդունեցին ի գիտություն:

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը փաստեց, որ հաշվետվությունների ձևաչափերը թույլ են տալիս ամբողջությամբ պատկերացում կազմել մարզերում և Երևան քաղաքում իրականացված աշխատանքների վերաբերյալ, ինչպես նաև տեսանելի դարձնել այն աշխատանքները, որոնք պետք է կատարվեն:

Հանձնաժողովի անդամ պարոն Ս. Մաղաքյանն առաջարկություն ներկայացրեց ձևաչափերում ներառել դրույթներ մարզերում հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին, որոնք խթան կհանդիսանան շահագրգիռ այլ մարմինների հետ համագործակցությունը խորացնելու համար:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ պարոն Ա. Կեսոյանը: Զեկուցողը նշեց, որ Համալիր ծրագրով սահմանվել է ստեղծել միջգերատեսչական խումբ, որի կողմից իրականացվելու է համալիր ծրագրով նախատեսված միջոցառումների և դրանց թիրախային արդյունքների մշտադիտարկում:

Միջգերատեսչական խումբը ձևավորվում է ՀՀ նախարարությունների, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարարական և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներից: Միջգերատեսչական խմբի անդամների թիվը չպետք է գերազանցի 10-ը, որը հաստատվելու է Հանձնաժողովի կոմից : Կազմում պետք է ընդգրկվեն հասարակական կառույցների և պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ հավասարության սկզբունքով, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից: Պարոն Ա. Կեսոյանը նշեց, որ հասարակական կազմակերպությունների հետը քննարկվել և միջգերատեսչական խմբում առաջադրվել է 4 թեկնածությունը: Հավասարության սկզբունքը հաշվի առնելով՝ նախարարությունները նույնպես պետք է ներկայացնեն 4 թեկնածություն:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանն առաջարկեց 5-օրյա ժամկետում առաջարկություններ ստանալ պետական գերատեսչություններից և նիստի արձանագրությունների հետ մեկտեղ Հանձնաժողովի անդամների հաստատմանը ներկայացնել նաև միջգերատեսչական հանձնաժողովի կազմը:

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության հաշմանդամների հիմնահարցերի բաժնի պետ տիկին Ա. Հակոբյանը, որ ներկայացրեց տեղեկատվություն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հաշվետվության վերաբերյալ:

Զեկուցողը նշեց, որ Հայաստանն այս տարի առաջին անգամ պաշտպանեց 2012 թվականի զեկույցը: Տիկին Ա. Հակոբյանը նշեց, որ ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով Կոմիտեին է ներկայացվել հաշմանդամության ոլորտում 2012-2016 թվականների ընթացքում իրականացված աշխատանքները, ինչպես նաև այն նոր ծրագրերը և միջոցառումները, որոնք առաջիկայում նախատեսված է իրականացնել: Տիկին Ա. Հակոբյանը նշեց նաև, որ Կոմիտեն, դրական քայլ համարելով Համալիր ծրագրի ընդունումը, Հայաստանում ներառական կրթություն ներդրմանն ուղղված ջանքերը, ինչպես նաև ողջունելով 2016 թվականը հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու մասին որոշումը միաժամանակ իր մտահոգությունն է հայտնել, որ Հայաստանում հաշմանդամություն

ունեցող անձանց նկատմամբ խտրականության դեմ պայքարը շատ թույլ է տարվում և հորդորել է, որ Հանձնաժողովն ակտիվ ներգարվվածություն ունենա խտրականության դեմ պայքարի օրենսդրության դաշտի կատարելագործման հարցում: Զեկուցողը նաև հորդորեց Համալիր ծրագրով նախատեսված միջոցառումները պահել ուշադրության կենտրոնում և իրականացնել աշխատանքներ դրանք կյանքի կոչելու համար, որը հավասար հնարավորություններ և մատչելի պայմաններ ապահովելու գրավականն է:

Հանձնաժողովի անդամ Ս. Թադևոսյանը նշեց, որ Կոմիտեն ուղարկել է Հայաստանի մասով առաջնահերթ ամփոփիչ առաջարկները, որոնց մեջ կարևորվում է մատչելի միջավայրի ստեղծման խնդրի լուծումը:

Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը հանձնարարեց հաշմանդամների հիմնահարցերի վարչությանն առաջարկությունների ամփոփիչ փաստաթուղթը պաշտոնապես ստանալուց հետո տրամադրել հանձնաժողովի անդամներին և նախապատրաստել դրա քննարկումը Հանձնաժողովում: Բացի այդ, Հանձնաժողովի նախագահ պարոն Ա. Ասատրյանը նշեց, որ ՀՀ կառավարությունը հստակորեն գիտակցում է ոլորտում առկա խնդիրները, մշակվում և արդեն իսկ գործում են մի շարք ծրագրեր և անհրաժեշտ է բոլոր հնարավոր ռեսուրսներով և միասնական ջանքերով լուծել առկա հիմնախնդիրները:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**

11.05.2017թ